Եւ ի ժամուս Եղիազար վարդապետն ի Դալաթա եկաւ և անտի երեկոյիս ի Աստուածածին։ Եւ երեկոյիս ի Սուրբ Նիկողոս գնացի և քարոզ ասաց Խաչատուր վարդապետն ըստ խորհրդի աւուրն, և ի մէջ քարոզին յիշատակեաց զեղեալ չարիսն վասն Եղիազարին, որ արարին ոմանք, և վասն զայթակղութեան աշխարհիս, որ արք ոմանք գնացեալ Ֆռանկաց հաւանեալ։

Կիրակի օր (25 Մայիս) Պենտակոստ եւ Դալուստ Հոգոյն Սրբոյ։ Ի Սուրբ Նիկողոս գնացի, և յետ անդաստանին ի Սուրբ Աստուածածին գնացի, և Մարտիրոս վարդապետն քարոզ ասաց և դաս քաշեց ըզ-Ֆռանկսն և զհաւանողսն նորին։ Եւ Տէրտէրն իմ կարդաց զթուղթ Եղիազար վարդապետին որ տվեալ էր վասն Խաչատուր եպիսկոպոսին՝ վասն ողորմութեան, և յետ այնորիկ ծանոյց թէ Ահա՛ նորընծայ երէց կու ելնէ, երթաք զԱւետարանն համբուրէք եւ զընծայն տաք։ Եւ յետ բանիցս ըսկսան ասել զՈղորմեան, և Եղիազար վարդապետն ի խուցն էր և պատարագին եկաւ։ Եւ ես գնացի ի մեր ժամն առնել զաջահամբուրքն, և կրկին ժամանեալ ի Սուրբ Աստուածածին և զՍուրբ Աստուած պատարագին ասէին և պատարագողն Տէր Ոհանի որդի Տէր Գրիգորն էր։ Եւ յետ արձակմանն նոյն զգեստով[1]) պատարագին, դպրովք եւ երիցովք, շարականաւ առեալ տարաք ընդ Մարտիրոս վարդապետին ի տուն. և ասաց ի մէջ արանցն եկելոց զՊահպանիչն և գնաց ի ժամ, և մեք տարաք ևս շարականաւ ի ներս ի մէջ կանանցն, և եկեալ համբուրեցին զԱւետարանն եւ ետուն զաջահամբուրն, նոյնպէս և ի մէջ արանցն և նոքա ետուն զընծայն, և նստան ամենեքեան։ Եւ ես գնացի ի քով Վարդա-

1) սգեստով.